ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 420 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ և 2.2-րդ, 127-րդ հոդվածի 2-րդ, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասերով, համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի «2026 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N67-Ա որոշման 1-ին կետի,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան բազմաբնակավայր համայնքում (այսուհետ՝ Համայնք) 2026 թվականի նոյեմբերի 29-ին նշանակել Համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություն:
2. Համայնքի նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնում է ոչ շուտ, քան Համայնքի նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման հաջորդ օրը:

2026-09-10 17:26:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 10
ք. Կապան